

մզոտմ էր նոր Զուղայի գաղթօջախը՝ ազգային դեմքն ու գոյությունը պահպանելու համար։

Մյուս կողմից, նկատի առնելով այն հանգամանքը, որ իրանում եվրոպական պետությունների շահերի օգտին բացառիկ կարևոր դեր էին խաղում նաև կաթոլիկ եկեղեցին ու նրա գործակալները, կարելի է ասել, որ իրանահայերի պայքարն ընդդեմ միսիոներների օբյեկտիվորեն ուղղված էր իրանում տրևալու ազգայական գաղութարարների զավթողական ծրագրերի դեմ։

2. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԱՂԹՕՋԱՆՆԵՐԸ

Հնդկաստանը Արևելքի այն երկրներից է, ուր հայերը ոտք են դրել և հնդիկ ժողովրդի հետ փոխհարաբերությունների մեջ մտել տակավին վաղ ժամանակներից։

Հայաստանի մի շարք քաղաքներ հարյուրամյակներ շարունակ ծառայել են իբրև Հնդկաստանի հետ կատարվող ապրանքափոխանակության կենտրոններ։ Պրոկոպիոսի (VI դար) վկայությամբ Դվինում առևտուր անող վաճառականների շարքում կային նաև հնդիկներ²⁰։ Մյուս կողմից հայտնի է, որ Անիի հռչակավոր Կաթողիկոսի ջահը հայ վաճառականները բերել էին Հնդկաստանից։

Հայերի Հնդկաստան այցելելու մասին արժեքավոր փաստեր կան XII դարի անանուն հայ ճանապարհորդի «Անուանք քաղաքացն Հնդկաց և Պարսից» աշխատության մեջ։ Շարադրանքից երևում է, որ հայ հեղինակը եղել է Հնդկաստանի մի շարք քաղաքներում և իշխանություններում²¹։

Հին շրջանում Հնդկաստանի հետ հայերի ծանոթության և առևտրի նպատակով այցելությունների մասին է խոսում Հեթում պատմիչը։

Հայ-հնդկական առևտրական հարաբերությունները առանձնապես աշխույժ բնույթ են ստանում XVI—XVII դարերում։ Հայերի հաճախակի այցելությունները Հնդկաստան, բնականաբար, նրանց հնարավորություն էր տալիս մոտիկից ծանոթանալու երկրի հետ։

Սկսած XVI դարից, Հնդկաստանի դանազան վայրերում, հատկապես ծովափնյա քաղաքներում, հաստատվում են առաջին հայ համայնքները։

Կոստանդ վարդապետի՝ նոր Զուղայի հայկական դպրոցի աշակերտների համար կազմած առևտրական ձեռնարկի մեջ մատնացույց են արվում տասնյակ առևտրական կենտրոններ Հնդկաստանում, որոնք ծանոթ էին հայ վաճառականներին, և ուր բնակություն էին հաստատել հնդկահայերը։

Հնդկահայ գաղթօջախների գոյացմանը և ստվարացմանը ղգալիորեն նպաստել է մողոլ կայսրության ազատամիտ գահակալներից մեկի՝ Աբբար թագավորի (1556—1605) քաղաքականությունը։ Երկրի արդյունաբերությունը դարգացնելու և առևտուրը ծավալելու նպատակով նա իր թագավորության սահմաններում ելումուտքի ազատ իրավունք էր տվել ձեռներեց հայ վաճառականներին։ Հայ առևտրականներին արտոնված էր ցանկացած ապրանքն արտահանել և ներմուծել, մտնել կայսրության այնպիսի շրջաններ, ուր արդելված էր օտարականների մուտքը, իրենց ապրանքներն առաջին հերթին փոխադրելու միջոցներ ստանալ և այլն։

²⁰ *Στ'α Προκοπίου Κεσαριεύσιου. Ιστορία των Ρωμαίων με τους Πέρσες* СПб, 1898, էջ 181—182։

²¹ Վ. Զեբեր *Մատենադարան», № 4, 1958, էջ 317—328*։

Հնդկահայ հնագույն և մարդաշատ գաղթավայրերից մեկը դոնվել է Ագրայում: Աբբար թագավորը այնտեղ հաստատված հայ բնակչությանը հողամաս է հատկացրել և անկաշկանդ պորթուգիզության յուր հնարավորություններ տվել: 1562 թ. Ագրայում ապրող հայերի համար նա նույնիսկ ոլտական ծախսով եկեղեցի է կառուցել, որն ապացույց է մնայուն հայ համայնքի առկայության:

Աբբարն այնքան մեծ վստահություն է ունեցել հնդկահայերի նկատմամբ, որ իր պետության մի քանի կարևոր պաշտոններ վստահել է նրանց: Հայտնի է, որ բարձրագույն դատավոր Միր Աբդուլը հայ է եղել, արքունիքի պալատական բժշկուհի Հուլիանան՝ հայուհի, արտաքին գործերի նախարարության մեջ աշխատող թարգմանների ու դիվանագետների մի մասը հայեր էին: Հայուհի էր Աբբարի թագուհիներից մեկը՝ Մարիամ Զուգանի Բեկումը²²:

Մեզ է հասել մի ավանդություն Աբբարի կողմից որդեգրված մի հայ երևալի մասին: Իբր Աբբարը, ծպտված շրջագայության ժամանակ, Քաշմիրում հանդիպում է Հակոբ անունով ջուղայեցի մի հայ վաճառականի և ծանոթանում նրա ընտանիքի հետ: Այստեղ նա տեսնում է վաճառականի մանկահասակ որդուն, հավանում և առաջարկում իր որդեգիրը դարձնել: Թագավորն իր որդեգրած երեխային վերանվանում է Զուլգարնայն, վերջինս հետագայում նշանակվում է Հուզիի և Փենջաբի կառավարիչ:

Ագրայի հայկական գաղթօջախն ավելի է մեծանում շահ Աբբասի բռնադադլից և Նոր Զուլայի հիմնադրումից հետո: Նոր Զուլայի մեծահարուստ վաճառականները Հնդկաստանի մեծ ու վաճառաշահ քաղաքներն են ուղարկում իրենց մշտական գործակատարներին: Երկու տասնամյակ անց բազմաթիվ նոր գաղթավայրեր են ստեղծվում Հնդկաստանում, ուր վաճառականներից բացի բնակչություն են հաստատում արհեստավորներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ: Ըստ Մեսրոպ Սեթյանի Ագրայում ապրող հայերի մեջ եղել են նաև պետական պաշտոնյաներ, զորավարներ, զինվորներ, թնդանոթաձիգներ, զինագործներ, ճարտարապետներ և այլ մասնագետներ:

Ագրայի հայ արհեստավորությունը, ինչպես երևում է, գործուն մասնակցություն է ունեցել տեղական զենքի արտադրության մեջ: Հայտնի է, օրինակ, թնդանոթ ձուլող լավագույն մասնագետ Հովհաննան Զուլայեցին, որի պատրաստած թնդանոթների վրա դրոշմված է եղել իր անունը՝ հնդկերեն, պարսկերեն և հայերեն լեզուներով:

Հնդկաստանի մոդոլ կայսրության շրջանում փոքրիկ գաղթօջախ է եղել Մուրշիդաբադում՝ Բենգալիայի մոդոլ փոխարքաների մայրաքաղաքում: Այստեղ հայերը ապրել են քաղաքի Սեյդաբադ կոչվող արվարձանում: Ըստ տեղեկությունների, մոդոլ կայսր Աուրանգզեբը (1658—1707), հետևելով Աբբարի քաղաքականությանը, աշխատել է խրախուսել հայ բնակչության ներգաղթը Հնդկաստան: 1665 թ. Սեյդաբադում նա հողամաս է հատկացրել հայերին շենքեր կառուցելու համար և մի շարք արտոնություններ շնորհել: Հետագայում Բադրշահը ևս կայսերական հրովարտակով նորից հաստատել է իր նախորդների կողմից հնդկահայերին տրված առանձնաշնորհումները. ըստ նրա արտոնագրի մահացած հայերի շարժական և անշարժ գույքը մնացել է հայերի իրավասության տակ:

²² Տե՛ս M. J. Seth, Armenians in India, Calcutta, 1937, էջ 161—166:

Սևյիդարադում հայերին արված արտոնությունների մասին վկայություն ունի XVIII դարի երկրորդ կեսում Հնդկաստանում պաշտոնավարած անգլիացի Բայթլը: Նա գրում է. «Հայերը, որոնք մեծ հաջողություն են ունեցել Հրնդ-կաստանում, մնալուն զաղութներ և ունեցել նաև Բենգալիայի մեջ, մասնա-վարապետ Սևյիդարադում: Նրանց վաճառականությունը նույնպես հաստատ-ված է հղել մոլդով թագավորների ֆերմանով, որով իրենց երկու զխավոր ապ-րանքների վրա՝ մահուգի և հում մետաքսի, մաքս է որոշված հղել հարյուրից 3,5 տոկոս»²³:

Հնդկահայ գաղթօջախների մյուս խումբը ստեղծվել է XVII—XVIII դա-րերում, ծովային ճանապարհով Պարսկաստանից Հնդկաստան եկած հայ գաղ-թականների կողմից՝ զխավորապես նավահանգստային քաղաքներում: Ըստ որում, հայ բնակչության ներհոսք դեպի Հնդկաստանի ծովափնյա նշանավոր քաղաքներ շարունակվել է մի քանի տասնամյակ: Որքան ծանրացել է նրանց վիճակը Իրանում և Անդրկովկասում, այնքան ավելի է ուժեղացել պարսկահա-յերի գաղթը դեպի Հնդկաստան:

Մովսիսի ճանապարհի վրա հայկական գաղթականության առաջին հան-դրվածքը եղել է Սուրաթը, որը Հնդկաստանի ամենից նշանավոր նավահան-դիստն էր Հնդկական թերակղզու արևելյան ափին՝ Բասրայից և Բանդար-Աբբասից եկող առևտրական նավերի համար:

Սուրաթում հայեր լինելու մասին տեղեկություններ ունենք դեռևս XVI դարից: Այդտեղ գտնվել է հայերեն 1579 թ. արձանագրությամբ տապանա-րար²⁴: Հայկական գաղթօջախն այդ ժամանակ, իհարկե, փոքր է եղել: Սուրա-թում մնալուն և բազմամարդ հայկական համայնք ստեղծվել է XVII դարում, որը գոյատևել է մինչև XVIII դարի վերջերը:

Սուրաթի հայ համայնքի սոցիալական բոլոր խավերի մեջ գործուն դեր են ունեցել վաճառականները, որոնք սեփական օվկիանոսային նավեր են ունե-ցել և խոշոր դեր կատարել տարանցիկ առևտրի բնագավառում:

Սուրաթում բնակվել են նաև մեծ թվով կերպասագործներ, որոնք խո-ջաներից վարկ ստանալով, կազմակերպել են հումքի հայթայթումը, թեև մա-նիլը, կտոր գործելը²⁵:

Հնդկաստանի արևելյան նավահանգիստներից աչքի ընկնող հայկական զաղութ է եղել Մադրասում (կոչվել է նաև Չինի Փաթան): Քաղաքը 1504 թ. սկսած պորտուգալացիների առևտրական կայանն էր: 1602 թ. այն գրավել են անգլիացիները, ս. Գևորգ բերդի շրջակայքում հիմնել Մադրասի նոր քաղա-քամասը, ուր և տեղավորված է եղել հայկական գաղթօջախը:

Մադրասում հայկական մնալուն համայնքն ստեղծվել է XVI դարի կե-սերից: Դրա անհերքելի ապացույցը Մադրասից ոչ հեռու գտնվող ս. Թովմայի բլրի վրա կառուցված հայկական եկեղեցին է եղել, որն այժմ կանգուն չէ, սա-կայն պահպանվել է կառուցման 1547 թ. արձանագրությունը, որպես խոսուն վկա հայկական անհետացած գաղթօջախի²⁶:

Հնդկաստանի պատմության լավագույն մասնագետ Ֆրանսուա Մարտինը,

²³ M. J. Seth. Armentans in India., էջ 325:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 225:

²⁵ Տե՛ս Լեո, Հայ տպագրության պատմություն, հատ. 2, Թիֆլիս, 1904, էջ 451:

²⁶ Տե՛ս Գուլախյան, Հնդկահայեր, էջ 44:

Մադրասի հայկական համայնքի մասին խոսելիս, գրում է. «Հավաստի հաստատված է, որ Սուրբ Թովմասի բուն սկզբնավորությունը բազմաթիվ այն հայերի դործն էր, որոնք այստեղ իրենց բնակությունն էին հաստատել»:

Մեսրոպ Սեթին հայտնի է եղել 1790 թ. ընդարինակված մի ձեռագիր, որի գրիչ Հովհաննես-Սարգսիս իր հիշատակարանում հայտնել է, թե Մադրասի հայ համայնքը բազմաթիվ նոր գաղթականներ է ընդունել ու հայաբնակ կուրեոր կենտրոն դարձել 1666 թ.²⁷:

Մադրասի հայ համայնքն ավելի է մեծացել և աչքի ընկնող դեր կատարել հատկապես XVII դարում: Հայկական թաղամասը գտնվել է նոր քաղաքի կենտրոնական մասում՝ նրա գլխավոր մայրուղու վրա, որ կոչվել է Հայկական փողոց: Փողոցն իր այդ անունը պահել է մինչև մեր օրերը:

Հնդկահայ խոշոր գաղութ է եղել նաև Բոմբեյ քաղաքում: Ցանկանալով Բոմբեյը դարձնել վաճառաշահ մի քաղաք, անգլիացիներն այստեղ են հրավիրել Սուրբի հայերին, տրամադրելով նրանց հողամաս և վարկ՝ տներ կառուցելու համար: Այստեղի խոշոր վաճառականներից էր խոջա Մինասը, որը սեփական օվկիանոսային նավեր է ունեցել «Օքսենտ», «Հույս» և այլ անուններով:

Հայերը Բոմբեյում կենտրոնացած են եղել քաղաքի Հայկական կոչվող թաղամասում: Այդ թաղամասը կտրող փողոցը կոչվել է Հայկական փողոց: Հայ համայնքն իր համար եկեղեցի է կառուցել, որը կանգուն է մինչև այսօր:

Բենգալիայի հայկական հնագույն գաղթօջախներից է Ձիլրան, որը սկզբում հուլանդական առևտրական կայան էր, իսկ հետո անցել է անգլիացիներին:

Ձինսուրայում հայերը սկսել են հավաքվել և գաղթօջախ ստեղծել 1645 թ., կապված խոջա Մարգարի գործունեության հետ: Հետագայում հայկական այս գաղթօջախը զգալիորեն բարգավաճել է: Հայ համայնքն այստեղ ևս ունեցել է իր եկեղեցին (կառուցվել է 1697 թ.):

Հայերը Կալկաթայի հնագույն բնակիչներն էին: Կալկաթան անգլիացիների կողմից նավահանգստի է վերածվում 1690 թ., իսկ Մեսրոպ Սեթն անվիճելի փաստերով ցույց է տվել, որ Կալկաթայի Մաթենաթի թաղամասում հայեր են բնակվել տակավին 1630 թ. (այդ թվականը կրող հայկական տապանաքար է գտնվել այնտեղ):

Հայկական փոքր համայնքներ են եղել նաև Հնդկաստանի բազմաթիվ այլ քաղաքներում:

XII—XVII դարերում եվրոպացիների Հնդկաստան ներխուժելուց և այնտեղ հաստատվելուց հետո, ինչպես հայտնի է, ծավալվեց կատաղի պայքար հնդիկ ժողովրդի և գաղութարարների միջև: Հնդիկ ժողովուրդը զենք վերցրեց երկրից դուրս վտարելու անկող հյուրերին, որոնք սկսել էին կեղեքել երկիրը: Հնդիկ ժողովրդի համար ճակատագրական այս ծանր օրերին հնդկահայերը աներեր կանգնեցին հնդիկ հայրենասերների կողքին:

Եվրոպացիների Հնդկաստան թափանցելուց առաջ հայերը ճանաչված էին Հնդկաստանում: Օգտվելով հնդիկ ժողովրդի և տեղական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից, նրանք ծավալել էին լայն գործունեություն հատկապես արտաքին առևտրի բնագավառում: Հայերի ձեռքում էր գտնվում, հիմնականում, Եգիպտոսի, Ռուսաստանի, Հիվոռնոյի, Վենետիկի և եվրոպա-

²⁷ Տե՛ս M. J. Seth, Armenians in India, էջ 579:

կան այլ երկրների հետ կատարվող առևտուրը, Հայերի կողմից վարձված արարական և եվրոպական նավերն ակոսում էին Հնդկական օվկիանոսը, մուտք դործում Սումատրա, Ֆիլիպիններ, Չինաստան և հեռավոր արևելքի այլ երկրներ, Առևտրի համար ստեղծված բարենպաստ պայմանները հնարավորություն էին տալիս նաև հայ արհեստավորներին և նրանց հետ կապված հայ բնակչության մյուս խավերին հաստատվել Հնդկաստանի քաղաքներում:

Երբ Եվրոպացիները սկսեցին մուտք գործել Հնդկաստան, նրանք հնդկահայ առևտրականների նկատմամբ ցուցաբերեցին բարյացակամ վերաբերմունք, գործադրեցին բոլոր միջոցները սիրաշահելու հայ վաճառականներին, որպես Հնդկաստանին լավ ծանոթ, հնդկական իշխանությունների մոտ մեծ հեղինակություն ունեցող, արևելյան լեզուները և սովորույթները լավ իմացող անձնավորությունների: Ե՛վ անգլիական, և՛ ֆրանսիական, և՛ հոլանդական արևելյան հնդկական ընկերություններն իրենց գործունեության առաջին շրջանում աշխատում էին գործակիցներ փնտրել հայ վաճառականների շրջանում: Հնդկական իշխանությունների հետ բանակցությունների ժամանակ եվրոպացիների համար միջնորդի դերում հանդես էին գալիս հնդկահայ խոջանները:

Հնդկաստանում եվրոպացիների գործունեության առաջին շրջանում հայ առևտրականների նկատմամբ ցուցաբերած սիրաշահող քաղաքականության ցուցանշական փաստը այն պայմանագիրն է, որ 1688 թ. կնքվել է Անգլիայի Արևելա-հնդկական ընկերության և հնդկահայ վաճառականների ներկայացուցիչ խոջա Փանոս Բալանթարյանի միջև: Ըստ այդ պայմանագրի, հայ վաճառականներն ստանում էին անգլիական աղդեցության տակ գտնվող բոլոր երկրներում անգլիացուն հավասար իրավունք, կարող էին երթևեկել ցանկացած վայրերը, բնակություն հաստատել ցանկացած տեղում, կալվածքներ ունենալ, սլաշտոններ վարել և այլն: Անգլիական Արևելյան ընկերությունը նույնիսկ հանձն էր առնում իր ծախսով հայկական եկեղեցիներ կառուցել Հնդկաստանի այն վայրերում, ուր կային հայ համայնքներ, բայց դեռ չունեին եկեղեցիներ²⁸:

Սակայն այս միայն առաջին շրջանում: Եվրոպացիների Հնդկաստանում հաստատվելուց հետո, սկսվեց մեծ մրցակցություն նախ իրենց՝ եվրոպացիների, ապա եվրոպացիների և հայ վաճառականների միջև: Հայ վաճառականությունն այս մրցակցության ընթացքում ստացավ ծանր հարված և սկսեց դուրս մղվել առևտրական շուկաներից: Առանձին-առանձին և կամ փոքր թվով սլանիաներով՝ առևտուր անող հայերը կամ նրանց հետ կապված մյուս խավերը, ինչքան էլ հմուտ և ճկուն լինեին, բնականաբար, չէին կարող լուրջ դիմադրություն ցույց տալ հզոր բանակ և նավատորմ ունեցող Արևելա-հնդկական ընկերությանը, որը շատ հաճախ իր գործարքները կատարում էր արյունահեղ արշավանքներով և բռնի ուժով:

Պարսկաստանի վրայով անցնող ցամաքային ճանապարհի անապահովությունը XVIII դարում նպաստեց ծովային առևտրի դարգացմանը: Հնդկահայերը, որոնք մրցակցության սկզբում սեփական նավեր չունեին, կարճ ժամանակում կամ գնեցին և կամ կառուցել տվեցին սեփական նավեր, որոնց դեկերի մոտ կանգնած էին հայ ծովային կապիտաններ: Հայկական այդ նավերը շրջում էին հայկական կոչվող կարմիր-նարնջագույն դրոշակով: Ան-

²⁸ Տե՛ս «Ազգասեր», Կալկաթա, 1846, № 39:

դրլիացիներն ու ֆրանսիացիները, բնականաբար, բարի աչքով չէին նայում հայ վաճառականների գործունեությանը։ Դրանով պետք է բացատրել, որ եվրոպական դադութարարները հնդկական ջրերում շրջագայող հայկական նավերը ամեն կերպ աշխատում էին դուրս հանել շաքից։ Այսպես, Հնդկաստանից նոր Ջուղա ուղարկված մի նամակից իմանում ենք անգլիացիների կողմից հայկական մի նավի բռնագրավման մասին։ Տեղեկություններ կան նաև հայկական «Արշակ» անունով նավի բռնագրավման մասին և այլն։

Այս ամենից, բնականաբար, տուժում էին ոչ միայն հնդկահայ առևտրական խավը, այլև հնդկահայ մանր ձեռնարկատերերը և արհեստավորները, որոնք հայ գաղթօջախների բնակչության հիմնական մասն էին կաղմում և պատվերներ էին ստանում ու իրենց գործունեությամբ կապված էին հայ առևտրականների հետ։

Կարճ ժամանակում հնդկական հողի վրա եղած հայկական համայնքներից այնպիսիները, որոնք փոքր թվով բնակչություն ունեին և թույլ էին, սկսում են քայքայվել, իսկ որոշ տեղերում էլ դադարում են գոյություն ունենալուց։ Սակաված պայմաններում հայերը, մեծ կամ փոքր խմբերով, թողնում են անգլիացիների և՛ մյուս եվրոպացիների գրաված տերիտորիաները և տեղափոխվում Հնդկաստանի ու նրա հարևան երկրների դադութացույց գեոլոս ազատ շրջանները։

Անգլիացիները ոչ միայն սկսում են հայերին սոստիճանաբար դուրս մղել առևտրական շուկաներից, արգելքներ ստեղծել արհեստագործության զարգացման համար, այլև անցնում են բացահայտ հալածանքների. աղօրինի դատական գործեր են հարուցում, բռնագրավում նրանց ունեցվածքը, բանտ նետում և այլն։ Հայ գաղթօջախներն ընկնում են անգլիացիներից ունտեսական կոլոնիան մեջ։ Շուտով անգլիացիները հնդկահայերի վրա սկսում են նայել որպես թշնամիների։ Հայտնի է, օրինակ, որ 1746 թ. Մադրասի մոտ անգլիական ժովակալ Գրիֆթը ապօրինաբար բռնագրավում է բնագաղական հայերի մի առևտրանավ։ Անգլիական դատարանը, որին հանձնարարված էր այս գործի ըննությունը, իր որոշման մեջ արդարացնում է ժովակալ Գրիֆթի արարքը, քանի որ բռնագրավված նավը, նրա որակմամբ, հանդիսանում է «թշնամական սեփականություն»։

Ահա թե ինչով պետք է բացատրել հնդկահայ բնակչության որդեգրված քաղաքական կողմնորոշումը։ Հնդկահայ համայնքի բոլոր խավերն էլ, հիմնականում, դադութարարների դեմ թշնամաբար էին տրամադրված, իհարկե, յուրաքանչյուրը ելնելով իր շահերից։ Համատեղ պայքարի ելնելով անգլիացիների դեմ, հայերը պաշտպանում էին ոչ միայն իրենց երկրորդ հայրենիքը, այլև իրենց անձնական շահերը։

Հնդկահայերը հնդիկ ժողովրդի ազատագրական շարժումներին մասնակցել են տարբեր ձևերով։ Հնդկական իշխանությունների կողմից հովանավորված և արտոնված հայ վաճառականները հնդիկներին օգնել են դրամական միջոցներ տրամադրելով, հայ զինագործներն օգնել են զինք պատրաստելով, իսկ հայ զինավորականները մտել են հնդկական բանակ և հնդիկ ժողովրդի հետ ուսուցիչ կովել դադութարարների դեմ։

Հնադույն տեղեկությունները հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին հնդկահայերի մասնակցության մասին վերաբերում են 1662 թ., երբ պորտուգալական դադութարարները փորձել են տիրել Մալբարին և տապալել տեղա-

կան հնդիկ իշխանութիւնը: Տեղի հայ բնակչութիւնը դործուն մասնակցութիւն է ունեցել պորտուգալացիների դեմ հնդիկների պայքարին: Եվ հընդ-կական իշխանութիւնները, գաղութարարների դեմ հաղթանակ տանելուց հետո, Մալաբարի կառավարիչ են նշանակել հայազգի Մարկոս անունով մեկին:

Հայ-հնդկական դինական դաշնակցութեան և գաղութարարների դեմ մղած ազատամարտական պայքարի ամենից ակնառու փաստը՝ 1760—1764 թթ. Բեն-դալիայում հնդիկ ժողովրդի մղած ազատագրական կռիւներին հնդկահայերի անձնավոր մասնակցութիւնն է:

1760 թ., ինչպես հայտնի է, Հնդկաստանի անգլիական իշխանութիւնները, մեծաքանակ հարկ ստանալու և արտոնութիւններ ձեռք բերելու պայ-մանով, Բենգալիայի նավաբ են նշանակում Միր Կասիմին:

Վերջինս, հակառակ անգլիացիների ակնկալութիւններին, ձգտում է Բեն-դալիան դուրս հանել գաղութային տիրապետութիւնից, վերականգնել նրա քաղաքական ինքնուրույնութիւնը:

Իր գահակալութեան առաջին իսկ օրից, Միր Կասիմը իրեն շրջապատում է հակաանգլիական դիմորդում ունեցող մարդկանցով և պատրաստվում ազա-տագրական պայքարի: Անգլիացի գաղութարարներին Հնդկաստանի արևելյան ափերից դուրս վտարելու նպատակով ձեռնամուխ է լինում մարտունակ բանակ կազմակերպելուն: Իր այդ մտադրութիւնն իրականացնելու համար բանակի հրամանատար է կարգում կազմակերպչական ընդունակութիւններով օժտված հայ լինվորական Գրիգոր Հարութիւնյանին, որը հայտնի է Գորգին խան ա-նունով:

Վերջինս կազմակերպում է Բենգալիայի բանակը՝ հնդիկ և հայ լինվոր-ներին: Ստեղծում է 12 գունդ, որոնց հրամանատարները հայ և հնդիկ փորձ-ված լինվորականներ էին: Տեղում կազմակերպում է նաև դենքի ու լինամթեր-րի արտադրութիւն:

Հրապանների պատրաստման և թնդանոթների ձուլման գործում գործուն մասնակցութիւն են ունեցել հայ լինամարտիկները՝ Շահնաւարի ղեխավորու-թեամբ, որի 1761 թ. ձուլած «Ջամիլամա» կոչվող հրանոթը այժմ ցուցադրված է Հնդկաստանի Լահոր քաղաքի թանգարանում:

Բենգալիայի քաղաքական կյանքում կարևոր դեր են սկսում խաղալ հա-յերը:

Անգլիացիների դեմ մղած ազատագրական կռիւներում աչքի են ընկնում հազարապետ Մարգար Հարութիւնյանը, որն արժանանում է Բենգալիայի նավաբի բարձր պարգևին, Գրիգոր Այվաղյանը՝ իր ղորագնդով, հարյուրա-պետներ՝ նոր-ջուղայեցի Մկրտիչ Զաքարյանը, Մելքում Աստրախանցին, Նի-կողայոս Երևանցին և շատ ուրիշներ:

Անգլիացիները, պարտութիւն կրելով բաց ճակատում, սկսում են դավա-դրական աշխատանք տանել թիկունքում: Նրանք փորձում են պառակտում մտցնել Միր Կասիմի կուսակիցների շրջանում: Միր Կասիմի առջև ամբաստա-նում են Գորգին խանին և մյուս հայ հրամանատարներին, սակայն նավաբը մնում է անզրդվելի:

Այնուհետև անգլիացիները փորձում են կաշառել Գորգին խանին: Մե-ծամեծ խոստումներ տալով առաջարկում են անցնել անգլիացիների կողմը: Սակայն նա մերժում է՝ պատասխանելով, որ մինչև իր մահը հավատարիմ է մնալու հնդիկներին:

«Քա՛վ լիցի ինձ լինիլ տիրադրուժ, մանաւանդ զի հեռի է յազգէն մերմէ՛ այդպիսի տիրադրութիւն, զի որոյ որ ծառայեն Հայք, միամտութեամբ սրտի մնան հաստատունք մինչև ի մահն իւրեանց»²⁹։

Շատ լանցած անպիւհացիները նոր ուժեր ուտանալով անցնում են հակադրոհի և կասեցնելով հնդիկների հարձակումը, ստիպում նահանջել։ Զգալով մոտալուտ վտանգը, Գորգին խանը ապստամբների հիմնական ուժերը դասավորում է Կալկաթայից եկող ճանապարհների ուղղությամբ և պատրաստվում թշնամուն ճակատամարտ տալու։ Ռազմաճակատը ուժեղացնելու համար, նա երկրի մյուս մասերում պահվող զորամասերից մի քանի միավորումներ տեղափոխում է այստեղ։ Տեղափոխված հնդկական զորամասերի թվում էին նաև Մարգար Քալանթարյանի և Ղազար Հակոբյանի զորամասերը։ Հիմնական ճակատամարտը տեղի է ունենում Սանթա Գարիա կոչվող դաշտավայրում՝ Գանգեսի վտակներից մեկի ափին։ Անգլիական լավ վարժված և զինված բանակին հաջողվում է ճեղքեր բացել հնդիկ հայրենասերների ռազմաշարքերում, անցնել նրանց թիկունքը և վտանգավոր դրություն ստեղծել։

Հնդիկ-անգլիական կռիվները շարունակվում են 1762—1763 թթ.։ Ուշադրա՛վ է այն փաստը, որ ամեն անգամ գաղութարարների դեմ տարած հաղթանակի ժամանակ, ըստ սովորության, երբ բարձրացնելիս են եղել հնդկական դրոշակը, բարձրացվել է նաև հայկականը՝ որպես խորհրդանիշ հայ-հնդկական զինակցության։

Անգլիացիները 1763 թ. կազմակերպում են Գորգին խանի սպանությունը։ Հնդիկ հայրենասերները, կորցնելով սիրած հրամանատարին, զենքը վայր չեն դնում։ Սակայն հետագա դեպքերը անհաշու շրջադարձ են ունենում Բենգալիայի նստաբնակ համար, և նա ստիպված հեռանում է քաղաքական ասուր-րիկից։

Հնդիկ ժողովրդի ալղային-աղատագրական շարժումները Բենգալիայում ճնշելուց հետո անպիւհական գաղութարարները վրեժխնդիր եղան հնդկահայերի նկատմամբ։ Անգլիայի համայնքների պալատը, քննության առնելով հնդկահայերի բռնած դիրքը Բենգալիայի շարժումների ժամանակ, այն որակեց իբրև «անշնորհակալ վերաբերմունք» և հնդկահայերին զրկեց Արևելա-հնդկական ընկերության պայմանագրով նախատեսված առանձնաշնորհումներից։

* * *

Ուշ միջնադարում հայկական փոքրաթիվ գաղթօջախների կային նաև Ասիական մայրցամաքի տարբեր երկրներում՝ Զինաստանում, Բիրմայում, Ֆիլիպինյան կղզիներում և այլ վայրերում։

Զինաստանը Հին Արևելքի այն երկրներից է, ուր հայերը ոտք են դրել հնագույն ժամանակներից սկսած։ Տեղեկություններ կան այն մասին, որ հնում հայ վաճառականները հրթեռնակում էին Զինաստան և այնտեղից արտահանում մետաքս ու այլ ապրանքներ, գործարքներ կնքում տեղի հայերի հետ³⁰։

Հայ առևտրականները շարունակել են առևտուրը Զինաստանի հետ նաև վաղ միջնադարում, որի ժամանակ նրանց հաճախ ուղեկցել են հայ հոգևորականները՝ քարոզչության նպատակով³¹։

²⁹ Թ. Խոջամալխան, Պատմութիւն Հնդկաց, Կալկաթա, 1848, էջ 100։

³⁰ Տե՛ս H. Well, The Outline of History, London, 1895, էջ 475։

³¹ Տե՛ս Հ. Քյուրաջյան, Հում մետաքսի վաճառականությունը և հայերը, (առանձնատիպ), էջ 139։

Ստեփան Հայկական գաղթաօջախների հիմնումը Չինաստանում կապված է մոնղոլական առաջին արշավանքների հետ։ Հայտնի է, որ մոնղոլական հրոսակները հաղարավոր գերիններ քշեցին Հայաստանից և տարան դեպի Քաղաք, Սալարդանդ և ներկայիս Չինաստանի հյուսիսային շրջանները։

Որկերի հյուսիսում հաստատված այս հայ տարագիրները զբաղվում էին առևտրով և արհեստագործությամբ։ Նրանք շուտով թափանցեցին երկրի խորքերը և հասան մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը։

Հայերը բնակվում էին Չինաստանի կենտրոնական և առևտրական քաղաքներում։ Հատկապես մեծ էր նրանց թիվը կանտոնում։ Տեղեկություններ կան, որ 1307 թ. առաջ Կանտոնից ոչ հեռու կառուցվել է հայկական գեղեցիկ մի եկեղեցի³²։

Հայկական առաջին այս գաղթաօջախները, սակայն, երկար կյանք չունեցան։ Նրանց մի մասը ղոհ գնաց թաթար-մոնղոլական խժոժություններին։ XVI—XVII դարերում սկսվում է հայ-չինական հարաբերությունների նոր շրջանը։ Չինաստանի հետ աշխույժ առևտուր են սկսում իրանահայ և հնդկահայ վաճառականները։ Եվրոպացի ճանապարհորդները վկայում են, որ XVI—XVII դարերում հայերը աչքի ընկնող դիրք են ունեցել Չինաստանի առևտրի մեջ։

XVII դարի կեսերին Կանտոնից Հոնոմ ուղարկված մի նամակում հիշատակված է, որ այնտեղ ապրում են 30 հայ բնաբնիկներ³³։

Անդրլիական Արեւելու-հնդկական ընկերության և հնդկահայ վաճառականների միջև 1688 թ. կնքված վերահիշյալ պայմանագրի շորրորդ կետով իրավունք էր տրվում հայերին՝ անգլիացիներին հավասար մաքսով և ուղամաններով Չինաստանում առևտուր անելու³⁴։ Օգտվելով այդ արտոնությունից հայերը առևտրական լայն գործունեություն ծավալեցին։ Շուտով նրանք այնպիսի մրցակիցներ դարձան անգլիացիների համար, որ վերջիններս, որպես «թշնամու սեփականություն» սկսեցին բռնագրավել հայ վաճառականների նավերը, որոնք դուրս էին գալիս Չինաստանից։

XVIII դարի սկզբներին հայկական առևտրական օջախներ կային Շանհայում, Կանտոնում և Մակաոյում։

Հավանաբար, հայկական գաղթաօջախների կղզյակներից մասնից մարդաշատը և հայտնին Կանտոնն է եղել։ XVII դարում Կանտոնի հայ գաղթաօջախի մասին գիտենք ոչ միայն Նոր Զուղայում, այլև էջմիածնում։ 1765 թ. Միմեոն կաթողիկոսի կազմած հայկական գաղթաօջախների ցուցակում հիշվում է «Չինու երկիրը», Կանտոնը, Մակաոյը³⁵։

XVIII դարի վերջերից մեզ են հասել մի քանի հետաքրքիր վավերագրեր չինաբնակ հայերի մասին։ Նրանցից մեկը՝ կանտոնաբնակ գանձակեցի Մնացական Ղասապյանը, հայրենիքից հեռացած և օտարության մեջ հարստացած մի վաճառական, խոշոր մի գումար է կտակել իր հայրենի երկրին³⁶։ Մեկ ուրիշը՝ չինաբնակ Հովհաննես Մաթևոսյանը, 80000 լուրի է կտակել Նոր Նախիջևանին։

³² Տե՛ս «Երևան», Կ. Պոլիս, 1860, էջ 229։

³³ Տե՛ս «Արև», Կահիրե, 1958, 1 օգոստոսի։

³⁴ Տե՛ս M. J. Seth, Armeniens in India, էջ 420։

³⁵ Տե՛ս «Զամբու», էջ 46։

³⁶ Տե՛ս «Դիւան Հայոց պատմության», գիրք 14, էջ 312։

Զինաստանում հաստատված անգլիացիների հալածանքների հետևանքով XVIII դարի վերջերին հայերից շատերը տեղափոխվում են Մակաո, Սինգապուր և այլ վայրեր:

Զինաստանի աչքի ընկնող հայ մտավորականը Կանտոնում ծնված և կրթված, շինարեն լեզվի ուսուցիչ և թարգման Հովհաննես Ղազարյանն է եղել: Նա է անգլերենից շինարեն թարգմանել Աստվածաշունչը, որի մի մասը հրատարակվել է Սերամբուրում: Ըստ շինագետ մասնագետների՝ դա Աստվածաշնչի առաջին և հաջող թարգմանությունն է շինարեն³⁷:

XVI—XVII դարերից հայկական գաղթավայրեր են եղել Բիրմայում՝ Ալավյում, Պերուում և այլուր: XVII դարում հայերը Բիրմայի առևտրական կյանքում այնպիսի նշանակալից դեր էին կատարում, որ տակավին այնտեղ ամուր չհաստատված եվրոպացիները դիմում էին նրանց միջնորդությանն ու օգնությանը³⁸: Ինչպես Ֆիլիպինների, այնպես էլ Բիրմայի հայ համայնքները առաջացել և մշտապես համալրվում էին Նոր Զուղայից և Հնդկաստանից եկող հայերով: XVIII դարի կեսերից Բիրմայի շատ վայրերում, հատկապես ծովափնյա քաղաքներում, ստվարացավ հայերի թիվը Նոր Զուղայից եկող թարմ հոսանքով: Բիրմայի հայերը մասնակցել են անգլիական գաղութարարների դեմ ուղի բնակչության մղած ազատագրական պայքարին. նրանցից Գրիգոր Ալվալյանը եղել է այդ պայքարը պիսավորողներից մեկը:

XVII դարից հայկական գաղթօջախ կար նաև Ֆիլիպինյան կղզիներում, հատկապես նրա մայրաքաղաք Մանիլայում: Մանիլայի փոքրաքանակ հայ առևտրական գաղութը հանդիսանում էր յուրօրինակ մի հնական ու կառուցված օղակ Հեռավոր Արևելքի, Զինաստանի, Հնդկաստանի և Նոր Զուղայի հայ գաղթավայրերի միջև:

Մեկ հասած պատմական փաստերը, նյութական մշակույթի հուշարձանների մնացորդները խոսում են այն մասին, որ հնդկական հողի վրա ևս հույսերը ստեղծել են այնպիսի արժեքներ, որոնցից մի քանիսը դուրս են գալիս աղվալին սահմաններից և տեղ գրավում հնդկական մշակույթի մեջ:

Հնդկական ճարտարապետության պատմության մեջ են մտել Մալաբարի շրջանում կատարված մի շարք կառույցները, որոնք հայ մտքի արգասիք են: Հայտնի են հատկապես եռահարկ բազմակամար կամուրջը և հոյակապ քարի սանդուղքները 133 և 160 աստիճաններով:

Հնդկահայ մշակույթի մասին խոսելիս չպետք է մոռանալ Կալկաթայի «Հայկական» նավահանգիստը, հայ ճարտարապետների նախագծած և կառուցած եկեղեցիները և զանազան այլ շինություններ:

Սակայն հնդկահայերի ստեղծած մշակութային ամենաարժեքավոր ներդրումը հայ պարբերականի առաջնեկն է՝ «Աղբարարը», որը իր շուրջը համախմբեց հնդկահայ հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչներին և նպաստեց հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորմանը: «Աղբարարը» տպագրվել է 1794—1796 թթ. Մադրասում:

Հնդկահայ գաղթօջախը մեծ երախտիք ունի նաև հայ տպագրության ասպարեզում: Այստեղ XVIII դարի վերջերին հիմնադրվեցին մի քանի տպարան-

³⁷ Տե՛ս «Սին», 1959, էջ 276:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 158:

ներ, հրատարակվեցին բաղմաթիվ մեծարժեք աշխատություններ, հատկապես Մադրասում, Կալկաթայում և Բոմբեյում:

XVII—XVIII դարերում Հնդկաստանում գործել են հայ գրչության փոքրիկ օջախներ, ուր ընդօրինակվել են ձեռագրեր և կատարվել թարգմանություններ: Հայերեն ձեռագրեր են գրվել Սուրաթում, Կալկաթայում, Մադրասում, Ջիլպայում, Բոմբեյում և այլ քաղաքներում:

Հնդկահայ մտավորական Թովմաս հոջամալյանի գրչին է պատկանում XVIII դարի 60-ական թվականներին գրված «Հնդկաստանի պատմություն» մեծարժեք աշխատությունը, որը հնարավորություն է տալիս լուսաբանելու Հընդկաստանի պատմության եվրոպական ներխուժումների շրջանի մի շարք կրեմնոս հարցեր: XVIII դարում է գործել նաև Հակոբ Զուղայեցի Սիմոնյանը, որի գրչին պատկանող «Հնդար Ալու վարքը» նվիրված է Հնդկաստանի ազգային-ազատագրական պայքարի ամենից պայծառ դեմքերից մեկին: Սիմոնյանի աշխատանքը Մայսորի հերոսին նվիրված ուսումնասիրություններից առաջինն է: Հայ հնդիսակը եղել է Հեյդարի մտերիմն ու խորհրդականը՝ հակաանգլիական պայքարի տարիներին:

Հնդկահայ գաղթօջախներն ունեն նաև իրենց անվանի ներկայացուցիչները՝ դեղարվեստական գրականության ասպարեղում:

Հնդկահայ մշակույթը արժեքավորելիս չի կարելի լուռթյաժք անցնել մեծանուն մի բանաստեղծի կողքով, որը հիշատակվում է Ֆիրդուսու, հայամի, Սաադիի, Հաֆեզի նման մեծատաղանդ բանաստեղծների հետ միասին: Դու Սարմատն է: Նշանավոր Հենրի Քինը նրա մասին գրում է. «Սարմատը մի հայ վաճառականի սյուետիկ կեղծանունն է, որը Հնդկաստան է եկել դեռևս Շա: Զհանի օրոք... Նա լավ սյուետ էր և հիանալի տիրապետում էր բանաստեղծության հորինելու արվեստին»³⁰:

³⁰ Հնդկաստանի Մադրաս քաղաքի անվանի գործիչների՝ Շ. Շահամիրյանի, նրա որդիների, Մովսես Բադրամյանի և մյուս հայրենասերների գործունեությունը լուսաբանված է սույն հատորի առաջին մասի համապատասխան ենթագլխում, ինչպես նաև հայ մշակույթի պատմությանը նվիրված բաժնում: Կրկնությունից խուսափելով՝ այստեղ չենք անդրադառնում Մադրասի հայրենասիրական խմբակի գործունեությանը: